

142. ՀԱԼԱԼ ԱԽՊՈՐ ՏԸԵՂԸ ՎԸԵՁ ՄԻՆ ՊԵՆ ՏԱԼ ՉԻ

Երկու ախպեր ուրուր նհետ լավ չըն ինում։ Տահանք քյինամ ըն ամեքյա ուրանց հետե ուրուշու նհետ ըխպըրանում։

Օխտը տարե յա անց կենում, էտ ախպերքն ուրուր անա խռավ։ Մին օր էտ ախպորցը մինը քշերեն կեսումը քյինամ ա էն փըռնած ախպորը կոշտը, քունըտըեղա զուրքնըցնում, Քա պա էհինչ տըեղը մին մարթ ըմ ըսպանալ, կարում չըմ փըրտակեմ, եր կաց տըեսնանք հի՞նչ ընք անում։ Տա Քա՝ քյինա կորի, քու հերն էլ անիծած, քու ախպորն էլ, մարթը տու վըս ըսպանալ, ես պիտի՞ կյամ քու պաշտպան խթու մաշ ինգյիմ։

Էտ մարթը քյինամ ա ուրան իսկական ախպորը կոշտը, քունըտըեղա եր կըցընում, Քա էհինչ տըեղը մին մարթ ըմ ըսպանալ, կարում չըմ փըրտակեմ, եր կաց տըեսնանք հի՞նչ ընք անում։ Էտ իսկական ախպերը, Քա հիշտեղ ըս Քոզալ ըսպանված մարթը։ Տա եր ա կենում, վըեր քյինա ախպորը նհետ փըրտակեմ։ Քյինամ ա, տըեսնում մին վըեխճար մորթած, շախկան կախ տուված։ Էն մինը Քա՝ ա՛ ախպեր, էս ա իմ ըսպանած մարթը։ Մինչև մեհենգյ գյիդացալ ըմ, Քա նա յա իմ իսկական ախպերը, մեհենգյ գյիդացե, վըեր իսկական ախպորը տըեղը վըեչ մին պեն տալ չի։ Էս վըեխճարը քըզեսե չըմ մորթալ. նատենքյ, օտենքյ, խմենքյ, քյեֆ անենքյ։